կանգուն էր ԺԳ· դարում, բայց նա հին էր եւ շատ դարեր առաջ գոյութիւն է ունեցել բազիլիկ փոքր եկեղեցու շէնքի աւերակից եւ մնացորդներից դատելով: Բարեբաղդաբար լաւագոյն վիճակի մէջ է եւ դեռ եւս կանգուն նորա մօտ գերեզմանական մի կոթող, կապուած բազիլիկ եկեղեցիներին կից գերեզմանական արձանների արուեստին, ոչ միայն Օձունին, որ յիշեցինք, այլ եւ բազմաթիւ ուրիշների, որ պիտի յիշենք· ափսո՛ս, որ գլուխը կամ պսակը կտրուած է քիչ: Ցուշարձանը քառանկիւնի է· ցուցադրած առաջին երեսը հասկաձեւի դարդ է (Պկ· 45), սասանեան արուեստին եւս յատուկ մի մոտիւ, քեւ ոլորուն դարդը, որպէս յաւիտենականութեան նշանակ: Երկրորդ երեսի (Պատկ· 46) վերայ ոլորապտոյտ, փոխ առ փոխ, ողկոյզի, տերեւի եւ ընձիւղի շարք է, իսկ պատուանդանի վերայ երկրաչափական մի դարդ, յատուկ այս շրջանի մեր եւ սասանեան արուեստին (տես եւ Պատկ· 51 խոժոռնիում): Երրորդ երեսը (Պատկ· 47) արմաւենիկի ոլորապտոյտ մի դարդ է, որ Ե· դարի Տիկորի տաճարի արեւմտեան դրան ճակատին ունինք եւ նոյն շրջանին պատկանող յիշատակարանների մնացորդների վերայ, ինչպէս խոժոռնին (Պատկ· 50–51): Նոյն դարդարանքն (Պատկ· 47) ունինք Deir el Benat–ի

Պատկ· 52

ինչպէս տեսնել կարող ենք արծաթի անօթների վերայ:* Պատուանդանի վերին դարձնէզի դարդը ուղղահայեաց գծերի եւ խորափիտների շարքով կրկնուած են Կողբի մնացորդ քանդակների մէջ, որ յետոյ կը տեսնենք, ոչ աւելի ուշ քան Զ· դարը: Աւելի ներքեւ դրան ճակատաքարի վերայ, որ Ե· դարի գործ է համարւում:* Իսկ No. 51–ի նմանն ունինք Եգիպտոսում, բայց աւելի Ասորիքում, ըստ Strzygowski–ի V/VI դարի գործ:**

*Smirnov Bostochnoe Serebro Taf. CXX. St. Peters.—Orbeli et Trewer. Sasanidsky Metall. Moskwa—Leningrad. 1935. 51. տես եւ այստեղ Պատկ· 53, 57, 59:

*Deir el Benat–ը գտնւում է Հալէպի եւ Անտիոքի մէջ·

**Die Koptische Kunst. 189: 8792. Եգիպտոսի համար Crum. Die Grabstelle, 8633, pl. X.